ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ապրիլի 2021 թվականի N 449

## ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 21-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի, 53-րդ, 58-60-րդ հոդվածների, հիմք ընդունելով վարչական վարույթի քննարկման մասին 2021 թվականի ապրիլի 15-ի արձանագրությունը, հաշվի առնելով աղբահանման վճարների հաշվառման ընթացքի վերաբերյալ էլեկտրոնային քարտը, որի համաձայն Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջանի 72/1 շենքի թիվ 11 բնակարանի բնակիչ Սարգիս Սարգսյանի աղբահանության վճարի գծով պարտավորությունը 04.02.2021 թվականի դրությամբ կազմում է 36 906 դրամ (որից ապառք՝ 29 000 դրամ, տույժ՝ 7 906 դրամ): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սարգիս Սարգսյանը չի կատարել աղբահանության գծով իր պարտավորությունը՝

1. Սարգիս Սարգսյանից հօգուտ Աբովյան համայնքի բյուջե գանձել 36 906 (երեսունվեց հազար ինը հարյուր վեց) դրամ գումար՝ որպես աղբահանության վճար (վճարման հաշվեհամար՝ 900105201827):
2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Աբովյան համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սարգիս Սարգսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. ապրիլի 16
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ապրիլի 2021 թվականի N 448

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2021 թվականի մարտի 31-ի N 92-Ա որոշման, Աբովյան համայնքի վարչական տարածքում 2021 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով.

1. Հաստատել Կոտայքի մարզի Աբովյան համայնքի վարչական տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Կոտայքի մարզային փրկարարական վարչություն ներկայացնել՝

1) համայնքի հակահեղեղային կառույցների (կառույցի) հաշվառման վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն N 2 հավելվածի.

2) համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Աբովյան համայնքի ղեկավարի տեղակալ Դավիթ Զարոյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. ապրիլի 16
ք. Աբովյան

Հավելված N 1
Աբովյան համայնքի ղեկավարի 2021
թվականի ապրիլի 16-ի N 448 որոշման

# ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ

| Հ/Հ | Միջոցառումների անվանումը | Կատարող | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | 1. Կանխարգելիչ միջոցառումներ | | |
| 1 | Ուսումնասիրել և գնահատել քաղաքի հակահեղեղային կառույցների և սելավատարների վիճակը և արդյունքները ներկայացնել Կոտայքի մարզային փրկարարական վարչություն: | Դ. Զարոյան<br>Վ. Իվանյան<br>Ա. Ֆելիկյան<br>Գ. Խաչատրյան<br>Համատիրություններ | Մինչև 2021թ. մարտ, ապրիլ |
| 2 | Նախապատրաստել համապատասխան տեխնիկա և շինարարական նյութեր՝ հակահրդեհային կառույցների և սելավատարների անհրաժեշտ հատվածները մաքրելու, վտանգավոր տեղամասերում ափապաշտպան կառույցները ամրացնելու համար: | | |
| 3 | Մաքրել համայնքի տարածքում տեղակայված հակահեղեղային կառույցները, սելավատարները և սահմանով անցնող գետի հունը: Վտանգավոր տեղամասերում ամրացնել ափապաշտպան կառույցները: | | Մինչև 28.04.2021թ. |
| 4 | Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքներ՝ ջրածածկման, հեղեղավտանգ, սելավավտանգ և սողանքավտանգ գոտիներում: | | Մշտական |
| 5 | Նախապատրաստել համապատասխան քանակի տրանսպորտային միջոցներ, ինչպես նաև վառելիքա-քսայուղային նյութերի պաշար՝ հարկ եղած դեպքում աղետի շրջանից բնակչության տարհանման և վերականգնողական աշխատանքներ կատարելու համար: | Ա. Գյուլումյան<br>Ա. Ֆելիկյան<br>Ս. Ասիրյան | Ամեն օր սկսած 28.04.2021թ. |
| 6 | Նախապատրաստել միջոցներ՝ հարկ եղած դեպքում տուժածներին առաջին բուժօգնություն և բժշկական օգնություն ցույց տալու, անհրաժեշտության դեպքում ստացիոնար բուժում կատարելու համար: | Աբովյանի ԲԿ<br>Վ. Մանուկյան | Մինչև 25.04.2021թ. |
| 7 | Պատրաստ վիճակի բերել համայնքային կազմավորումները և արագ արձագանքման փրկարար խմբերը, դրանք հագեցնել համապատասխան անձնակազմով, տեխնիկայով և սարքավորումներով: | Դ. Զարոյան<br>Վ. Իվանյան<br>Ա. Ֆելիկյան<br>Փրկարարական ծառայություն | Մինչև 28.04.2021թ. |

| 2. Հիմնական միջոցառումներ | | | |
|---|---|---|---|
| 8 | Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին: | Ա. Պողոսյան<br>Համատիրություններ | Մշտական |
| 9 | Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար: | Համատիրություններ «Աբովյանի համայնքային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ | Անհրաժեշտության դեպքում |
| 10 | Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը: | Դ. Զարոյան<br>Ա. Ֆելիկյան<br>Վ. Իվանյան<br>Ս. Ասիրյան<br>Համատիրություններ | Անհրաժեշտության դեպքում |
| 11 | Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ: | Դ. Զարոյան<br>Վ. Իվանյան<br>Ա. Ֆելիկյան<br>Համատիրություններ | Անհրաժեշտության դեպքում |
| 12 | Ապահովել կապը աղետի շրջանում գտնվող հիմնարկ-ձեռնարկությունների և համայնքի արտակարգ իրավիճակների համապատասխան կազմակերպությունների միջև: | «Վեոն Արմենիա» ՓԲԸ | Անհրաժեշտության դեպքում |

Հավելված N 2
Աբովյան համայնքի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 16-ի N 448 որոշման

# ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
# ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱԿԱՀԵՂԵՂԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ (ԿԱՌՈՒՅՑԻ) ՀԱՇՎԱՌՄԱՆ

| Հ/Հ | Կառույցի | | | | | | Կառույցի տեղանքի սեյսմակայունության աստիճանը (բալ) | Մոտակա բնակավայրերի և կառուցվածքների անվանումը, որոնք կարող են տուժել կառույցի անբավարար աշխատանքի հետևանքով | Կառույցի տեխնիկական վիճակը (բավարար, անբավարար) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Տեղադրությունը (բնակավայր, գետավազան, վտակ) | Տիպը (հեղեղատար, հեղեղակարգավորիչ, բառաժ) | երկարությունը (մ) | լայնությունը (մ) | խորությունը (մ) | Կողեզրերի թեքությունը (մ) | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | 7-րդ և 8-րդ միկրոշրջաններից մինչև Արզնի խճուղի ձգվող սելավատար | Ջրահավաք և թունելային կառույց | 1500 | 2 | - | 90 | 9 | Սևանի փողոց վարչական կենտրոն, 2-րդ մ/շրջանի ցածրադիր հատված | բավարար |
| 2 | Երևանյան, Սևանի, Հանրապ. և Արզնի փողոցների խաչմերուկ | մայրուղի | 35 | 20 | 0.3-0.4 | - | 9 | Աբովյան-Արզնի մայրուղու երթևեկություն | բավարար |
| 3 | Աբովյան-Բալահովիտ համայնքների սահմանագծով անցնող գետակ | Բնական հուք | 100 | 7-10 | 1-1,5 | - | 9 | Աբովյան-Երևան երթևեկություն | բավարար |
| 4 | Երիտասարդական փողոցից մինչև Երևանյան փողոց ձգվող ջրահեռացման համակարգ | ջրահեռացում, կոյուղագիծ | 200 | | - | - | - | Էլար թաղամասի ներքին հատված | բավարար |

Հավելված N 3
Աբովյան համայնքի ղեկավարի 2021
թվականի ապրիլի 16-ի N 448 որոշման

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՊՈՏԵՆՑԻԱԼ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| 1. Վտանգավոր (աղետի) անվանումը (ները)<br>- սելավ<br>- հեղեղում<br>- սողանք<br>- քարաթափում<br>- և այլն | Սելավատար<br>7-րդ և 8-րդ միկրոշրջաններից մինչև Արզնու խճուղի ձգվող սելավատար:<br>Հեղեղում<br>Հանրապետության պողոտայի և Արզնու խճուղու խաչմերուկ |
| 2. Վտանգավոր տեղամասի գտնվելու վայրը (երը) | Երիտասարդական փողոցից մինչև Երևանյան փողոց ձգվող հատվածը (առանձնատներ):<br>Հանրապետության պողոտայի և Արզնու խճուղու խաչմերուկ |
| 3. Առաջացման հնարավոր պատճառները | Հեղեղատարի խցանում և տեղումների մեծ հոսք: |
| 4. Վտանգավոր տեղամասերի նկարագրությունը: | Երիտասարդական փողոցից մինչև Երևանյան փողոց ձգվող անհատական տների հատվածը՝ մոտ 85 տուն, թվով 420 մարդ: |
| 5. Կանխարգելիչ միջոցառումների առաջարկություններ իրականացնելու համար | Հեղեղատարների, դիտահորերի մաքրում և վերականգնում: |
| 6. Համայնքի բյուջեում կամ այլ ծրագրերով 2021թ-ին պլանավորված, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների համար ծախսերի չափը ըստ միջոցառումների տեսակների | Համայնքի բյուջե |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ապրիլի 2021 թվականի N 447

**ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ 8-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 199 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՊԱՐՍՊԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի և իրավահարաբերության պահին գործող 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 18-րդ կետերի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի տունը և պարիսպը կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Արմեն Հակոբյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի հունվարի 20-ի N Ք-79).

1. Արմեն Հովհաննեսի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2020 թվականի հոկտեմբերի 01-ի N 01102020-07-0058 վկայական) Աբովյան քաղաքի 8-րդ միկրոշրջանի 1-ին թաղամասի թիվ 199 հասցեում գտնվող 716.0 քառակուսի մետր մակերեսով հողամասում՝ «ՍԿԶԲՆԱԿԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2020 թվականի դեկտեմբերի 28-ին տրված հատակագծի (կցվում է) համաձայն՝ ինքնակամ կառուցված 206.88 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը և 13.71 քառակուսի մետր մակերեսով պարիսպը համարել օրինական:

2. Արմեն Հակոբյանը պարտավոր է ինքնակամ կառուցված բնակելի տան, պարսպի օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում Աբովյանի համայնքապետարանի 900105201397 հաշվեհամարին մուծել 463 240 (չորս հարյուր վաթսուներեք հազար երկու հարյուր քառասուն) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Հակոբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. ապրիլի 15
ք. Աբովյան

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Հաստատում եմ՝ «15» 04 2021թ.

Արմեն Հովհաննեսի Հակոբյան
(Անուն, ազգանուն)
ին Հողհատկացման հիմքը Աճուրդ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N01102020-07-0058

Կոտայք (Մարզ) — Աբովյան (Համայնք) — 8-րդ միկրոշրջան 1-ին թաղամաս թիվ 199 (Հասցե)

Մասշտաբ 1:500




| ՀՈՂԱՄԱՍԻ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատները Y | Կոորդինատները X | Գծային չափերը (մետր) | Սահմանակից սեփականատիրոջ (օգտագործողի) անուն, ազգանունը (անվանումը) |
| Մակերեսը (հա) | 0.07160 հա | 1 | 8469785.49 | 4462636.90 | 10.10 | |
| Ծածկագիրը | 07-002-0112-0022 | 2 | 8469785.35 | 4462647.00 | 24.93 | |
| Նպատակային նշանակությունը | բնակավայրերի | 3 | 8469785.53 | 4462671.93 | 20.42 | |
| Գործառական նշանակությունը | բնակելի կառուցապատման | 4 | 8469805.95 | 4462671.88 | 0.19 | |
| Հողամասը ծանրաբեռնված է | շենք - շինություն | 5 | 8469806.14 | 4462671.88 | 23.18 | |
| | | 6 | 8469805.92 | 4462648.70 | 11.70 | |
| | | 7 | 8469805.77 | 4462637.01 | 10.03 | |
| | | 8 | 8469796.75 | 4462637.12 | 10.26 | |
| | | 1 | 8469785.49 | 4462636.90 | | |

| ՇԵՆՔ, ՇԻՆՈՒԹՅԱՆ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Համարը՝ ըստ հողամասի հատակագծի | Գործառական նշանակությունը (անվանումը) | Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատները Y | Կոորդինատները X | Գծային չափերը (մետր) |
| 1 | բնակելի տուն | 1 | 8469795.58 | 4462637.12 | 15.61 |
| 2 | պարիսպ | 2 | 8469795.74 | 4462652.93 | 10.23 |
| | | 3 | 8469805.96 | 4462652.84 | 4.07 |
| | | 4 | 8469805.92 | 4462648.77 | 11.76 |
| | | 5 | 8469805.77 | 4462637.01 | 10.20 |
| | | 1 | 8469795.58 | 4462637.12 | |

Կատարող ____ (ստորագրություն) Արիստակես Ղազարյան (Անուն, ազգանուն)

Որակավորման վկայականի համարը 045 տրման ամիս, ամսաթիվը 15.12.2014թ.

Իրավաբանական անձի 282.110.1060839 (պետական գրանցման համարը) «ՍԿԶԲՆԱԿԵՏ» ՍՊԸ (անվանումը) Տնօրեն ____ (ստորագրություն) Ա.Ղազարյան

28.12.2020թ.

«ՍԿԶԲՆԱԿԵՏ» "SKZBNAKET" 00919816

հողամաս

| Շրջատվածային (բեկման) կետեր | Կոորդինատները | | Գծային չափերը (մետր) |
|---|---|---|---|
| | Y | X | |
| 1 | 8469785.49 | 4462636.90 | |
| | | | 10.10 |
| 2 | 8469785.35 | 4462647.00 | |
| | | | 24.93 |
| 3 | 8469785.53 | 4462671.93 | |
| | | | 20.42 |
| 4 | 8469805.95 | 4462671.88 | |
| | | | 0.19 |
| 5 | 8469806.14 | 4462671.88 | |
| | | | 23.18 |
| 6 | 8469805.92 | 4462648.70 | |
| | | | 11.70 |
| 7 | 8469805.77 | 4462637.01 | |
| | | | 10.03 |
| 8 | 8469795.75 | 4462637.12 | |
| | | | 10.26 |
| 1 | 8469785.49 | 4462636.90 | |

1 բնակելի տուն

| Շրջատվածային (բեկման) կետեր | Կոորդինատները | | Գծային չափերը (մետր) |
|---|---|---|---|
| | Y | X | |
| 1 | 8469795.58 | 4462637.12 | |
| | | | 15.81 |
| 2 | 8469795.74 | 4462652.93 | |
| | | | 10.23 |
| 3 | 8469805.96 | 4462652.84 | |
| | | | 4.07 |
| 4 | 8469805.92 | 4462648.77 | |
| | | | 11.76 |
| 5 | 8469805.77 | 4462637.01 | |
| | | | 10.20 |
| 1 | 8469795.58 | 4462637.12 | |

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Արմեն Հովհաննեսի Հակոբյան

Անուն, ազգանուն (անվանում)

Մարզ Կոտայք համայնք Աբովյան Հասցե 8-րդ միկրոշրջան 1-ին թաղամաս թիվ 199

Մասշտաբ 1:100

1.կիսանկուղ
H=1.50
h=2.45
D=0.50-0.65




1.կիսանկուղ
H=1.60
h=1.30,2.30
D=0.50

Կատարող Արիստակես Ղազարյան

Որակավորման վկայականի համարը 045 տրման ամիս, ամսաթիվ 15.12.2011թ.

Իրավաբանական անձի 282.110.1060839 (պետական գրանցման համարը) «ՍԿԶԲՆԱԿԵՏ» ՍՊԸ (անվանումը) Ա.Ղազարյան (ստորագրություն)

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Արմեն Հովհաննեսի Հակոբյան

Անուն, ազգանուն (անվանում)

Մարզ____Կոտայք____ համայնք____Աբովյան____ Հասցե__8-րդ միկրոշրջան 1-ին թաղամաս թիվ 199__

Մասշտաբ 1:100




**1.1-ին հարկ**
H=3.45
h=3.15
D=0.50
d=0.10-0.15

Կատարող __________ Արիստակես Ղազարյան

Որակավորման վկայականի համարը_045_ տրման ամիս, ամսաթիվը 15.12.2011թ.

Իրավաբանական անձի 282.110.1060839 (պետական գրանցման համարը) «ՍԿԶԲՆԱԿԵՏ» ՍՊԸ (անվանումը) Տնօրեն _____ Ա.Ղազարյան (ստորագրությունը)

# Շինությունների բնութագիր

| 22 | Նպատակային նշանակություն | Գործառնական նշանակություն | Հարկ | Հարկայնություն | Մակերեսները (քմ) | | Բարձրությունը (մ) | Ծավալը (խմ) | Կառուցման տարեթիվը | Տանիքի նյութը | | | | Ավարտվածության աստիճանը | | | | Պատերի շինանյութի տեսակը | Միջհարկային ծածկի նյութը | | Արտաքին հարդարումն ըստ կողմերի | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Օրինական | Ինքնակամ | | | | թիթեղ | շիֆեր | կոփածո | այլ նյութ | անավարտ | մինչև 50% | 50-80% | 80% և ավել | | փայտ | երկաթբետոն | Հատամը | երեսապատված | ցանկիր | տախտակապատ | դեկորատիվ սվաղ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 |
| 1 | բն. | բնակելի տուն | կիսանկուղ | 1 | 10,33 | | 2,45 | 25,31 | 1993 | | | | | | | | V | բետոն | | V | | | | | 4 |
| 1 | բն. | բնակելի տուն | կիսանկուղ | 1 | | 3,74 | 1,30 | 4,86 | 2019 | | | | | | | | V | բետոն | | V | | | | | 4 |
| 1 | բն. | բնակելի տուն | կիսանկուղ | 1 | | 27,79 | 2,30 | 63,92 | 2019 | | | | | | | | V | բետոն | | V | | | | | 4 |
| 1 | բն. | բնակելի տուն | 1 | 1 | | 91,43 | 3,15 | 288,00 | 2019 | V | | | | | | | V | տուֆ | | V | | | | | 4 |
| 1 | բն. | բ.պ. | 1 | 1 | | 39,59 | 4,65 | | 2019 | V | | | | | | | V | | V | | | | | | |
| 2 | բն. | պարիսպ | | | | 13,71 | 2,50 | 34,28 | 2019 | | | | | | | | V | տուֆ | | | | | | | 2 |

| Շինության ընդհանուր մակերեսը (քմ) | Այդ թվում Օրինական կառուցված (քմ) | Ինքնակամ կառուցված (քմ) |
|---|---|---|
| 27 | 28 | 29 |
| 186,59 | 10,33 | 176,26 |

Կատարող ______ (ստորագրություն) Արիստակես Ղազարյան (անուն, ազգանուն) 28.12.2020թ. (ամիս, ամսաթիվ)

Որակավորման վկայականի 045 (համարը) 15.12.2011թ. (տրման ամիս, ամսաթիվ)

Իրավաբանական անձի 282.110.1060839 (պետական գրանցման համարը) «Սկզբնակետ» ՍՊԸ (անվանումը) Տնօրեն (ստորագրություն) Ա. Ղազարյան

«ՍԿԶԲՆԱԿԵՏ» "СКЗБНАКЕТ" "SKZBNAKET" 00919816

# «ՍԿԶԲՆԱԿԵՏ» ՍՊԸ

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Աբովյան համայնքի 8-րդ միկրոշրջան, 1-ին թաղամաս թիվ 199 հասցեում գտնվող Արմեն Յովհաննեսի Յակոբյանին սեփականության իրավունքով պատկանող 0.07160հա հողամասի չափագրման աշխատանքների արդյունքում պարզվել է, որ նախկինում պետական գրանցում ստացած կիսանկուղին կից առկա է ինքնակամ կառուցված 45.47քմ արտաքին մակերեսով կիսանկուղային հարկ և ինքնակամ կառուցված 161.41քմ արտաքին մակերեսով առաջին հարկ: Յողամասում առկա է նաև ինքնակամ կառուցված 13.71քմ մակերեսով պարիսպ:

«ՍԿԶԲՆԱԿԵՏ» ՍՊԸ ________________ Ա. Ղազարյան

Տնօրեն

28.12.2020թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե

# Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն   № 045

## ԱՐԻՍՏԱԿԵՍ ԱԼԲԵՐՏԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության

գործունեության մասնագիտական որակավորման հանձնաժողովի

13 դեկտեմբերի 2011թ. եզրակացությամբ՝ արձանագրություն № 1

տրվել է

## ՔԱՐՏԵԶԱԳՐՈՂԻ, ԳԵՈԴԵԶԻՍՏԻ, ՉԱՓԱԳՐՈՂԻ (ՀԱՇՎԱՌՈՂԻ), ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԻ

*ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ*

ՀՀ կառավարությանն առընթեր
անշարժ գույքի կադաստրի
պետական կոմիտեի նախագահ

Է. ԶԱԽԱՐՅԱՆ

<<15>> դեկտեմբերի 2011թ.

Դիմող՝ Արիստակես Ղազարյան

Տրամադրված տեղեկատվությունը՝

17.12.2020թ.
(տրման ամսաթիվը)

| Հ/Հ | Մարզ | Համայնք, քաղաք, գյուղ, վարչական շրջան | Ծածկագիր | Կադաստրային քարտեզ | | Շրջադարձային կետերի կոորդինատներ | | Տպագրված թերթեր | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Միավորի քանակը | Արժեքը (դրամ) | քանակը | Արժեքը (դրամ) | քանակը | Արժեքը (դրամ) |
| 1 | Կոտայք | Արզական | 0112-0022 | 1 | 100 | | | | |
| 2 | Կոտայք | Զովունի | 0067-0039 | 1 | 100 | | | | |

Վճարման ենթակա գումարի չափը կրկնավճարով՝ 400 դրամ

Տեղեկատվությունը տրամադրվում է Կադաստրի կոմիտեի Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի կողմից:

«ՍԿԶԲՆԱԿԵՏ» "СКЗБНАКЕТ" "SKZBNAKET" 00919816

Սպասարկման գրասենյակ Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ապրիլի 2021 թվականի N 446

## ԱՐՄԵՆ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 02-ի N 88 որոշման, 2007 թվականի օգոստոսի 09-ի N 1036-Ն որոշման և 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 70-Ն որոշման և հաշվի առնելով Արմեն Մկրտչյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի մարտի 05-ի N Ք-635).

1. Թույլատրել փոփոխելու Արմեն Մկրտչյանին պատկանող (հիմք՝ 2020 թվականի նոյեմբերի 16-ի անշարժ գույքի վաճառքի պայմանագիր՝ կնքված Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Աբովյան սպասարկման գրասենյակում) Աբովյան քաղաքի Կոտայքի փողոցի թիվ 19/3 հասցեում գտնվող 91.98 քառակուսի մետր մակերեսով բնակելի նշանակության արտադրամասի գործառական նշանակությունը որպես հասարակական նշանակության սպասարկման օբյեկտ և առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի ու նախագծային փաստաթղթերի ներքին հարդարման աշխատանքներն ավարտելուց հետո այն օգտագործել որպես սպասարկման օբյեկտ և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 111.15 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը որպես հասարակական կառուցապատման հողամաս:

2. Արմեն Մկրտչյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 28 000 (քսանութ հազար) դրամ և 16 120 (տասնվեց հազար հարյուր քսան) դրամ՝ որպես անշարժ գույքի գործառական ու գործառնական նշանակությունների փոփոխության ծառայության վճարներ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Մկրտչյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. ապրիլի 15
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ապրիլի 2021 թվականի N 445

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 07-Ի N 74 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի և հաշվի առնելով Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի պաշտոնակատարի զեկուցագիրը (մուտք՝ 2021 թվականի մարտի 23-ի N Ք-756).

1. Ուժը կորցրած ճանաչել Աբովյան համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 07-ի «Աբովյան համայնքին պատկանող հողամասերին միասնական հասցե տրամադրելու մասին» N 74 որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. ապրիլի 15
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ապրիլի 2021 թվականի N 444

## ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՌՈՍԻԱ ՓՈՂՈՑԻ 8-ՐԴ ՇԵՆՔԻ ՄՈՏ ԳՏՆՎՈՂ ԽԱՆՈՒԹԻՆ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ և 49-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 70-Ն, հաշվի առնելով Հազրավարդ Թունյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի ապրիլի 02-ի N Ք-832).

1. Հազրավարդ Թունյանին պատկանող (հիմք՝ 2005 թվականի նոյեմբերի 04-ի N 2119706 վկայական) Աբովյան քաղաքի Ռոսիա փողոցի 8-րդ շենքի մոտ գտնվող խանութին և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե՝ քաղաք Աբովյան, Ռոսիա փողոց, թիվ 8/4:

2. Հազրավարդ Թունյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար.

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հազրավարդ Թունյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. ապրիլի 15
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ապրիլի 2021 թվականի N 443

## ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՎԱՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 4/4/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի և իրավահարաբերության պահին գործող 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 8.1-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ և 18-րդ կետերի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի նշանակության բնակելի տունը կառուցված չէ և ինքնակամ իրականացված ձևափոխումները կատարված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Վազգեն Խուդանյանի դիմումը (մուտք՝ 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N Ք-2615).

1. Վազգեն Հովսեփի Խուդանյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2019 թվականի հունիսի 21-ի N 21062019-07-0095 վկայական) Աբովյան քաղաքի Սևանի փողոցի թիվ 4/4/1 հասցեում գտնվող 89.54 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 51.9 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, ինքնակամ բացված 4 պատուհանը, 2 դուռը և 2 միջհարկային ծածկի բացվածքը համարել օրինական (հատակագիծը կցվում է):
2. Վազգեն Խուդանյանը պարտավոր է ինքնակամ կառուցված բնակելի տան և ինքնակամ կատարված ձևափոխությունների օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում Աբովյանի համայնքապետարանի 900105201397 հաշվեհամարին մուծել 155 740 (հարյուր հիսունհինգ հազար յոթ հարյուր քառասուն) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վազգեն Խուդանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. ապրիլի 15
ք. Աբովյան

134940
20800
155740

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզ ք. Աբովյան Սևանի փողոց թիվ 4/4/1 հասցեում ինքնակամ կառուցված բնակելի տան արտաքին մակերեսը կազմում է 51.9 քմ, առկա է նաև ինքնակամ կառուցված 4 պատուհան, 2 դուռ և 2 միջհարկային ծածկի բացվածք ։

Կատարող ______ (Ստորագրություն) — Տ.Լևոնյան (Անուն, Ազգանուն) — 01.12.2020թ. (Ամիս, ամսաթիվ)

Որակավորման վկայականի N 0247 (Համարը) — 20.12.2012թ. /Տրման ամիս, ամսաթիվ/

Իրավաբանական անձի 264.970056 (Պետական գրանցման համարը) — "Տիգրան Լևոնյան" ԱՁ (Անվանումը) — ______ ԱՏ (Ստորագրություն)

Հավելված N 3 (շարունակություն)

# Շինությունների բնութագիր

| ՀՀ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Հարկ | Հարկայնություն | Մակերեսները (քմ) | | Բարձրությունը (մ) | Ծավալը (խմ) | Կառուցման տարեթիվը | Տանիքի նյութը | | | | Ավարտվածության աստիճանը | | | | Պատերի շինանյութի տեսակը | Միջհարկային | | Արտաքին հարդարումը ըստ կողմերի | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Օգտակար | Ինքնակամ | | | | թիթեղ | շիֆեր | կղմինդր | փափուկ | անավարտ | մինչև 50% | 50-80% | 80% և ավել | | փայտ | երկաթբետոն | Շարվածք | երեսպատված | ծեփված | տուֆակիտ | [illegible] |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 |
| 1 | Բնակելի | բնակելի տուն | նկուղ | 2 | 34.1 | | 2.60 | 88.7 | 2010 | | | | | | | | V | բետոն | | V | | | | | 4 |
| 1 | Բնակելի | բնակելի տուն | նկուղ | 2 | 10.6 | | 1.40 | 14.8 | 2010 | | | | | | | | V | բետոն | | V | | | | | 4 |
| 1 | Բնակելի | աստիճաններ | | | | 1.4 | | | 2019 | | | | | | | | V | | | | | | | | |
| 1 | Բնակելի | բնակելի տուն | 1 | 2 | 42.5 | | 2.85 | 121.1 | 2010 | | | | | | | | V | տուֆ | | V | | | 2 | | 2 |
| 1 | Բնակելի | ավտոտնակ | 1 | 2 | 26.1 | | 2.95 | 77.0 | 2011 | | | | | | | | V | տուֆ | | V | | | 2 | | 2 |
| 1 | Բնակելի | աստիճաններ | | | | 2.9 | | | 2019 | | | | | | | | V | | | | | | | | |
| 1 | Բնակելի | բնակելի տուն | 2 | 2 | 43.8 | | 2.95 | 129.2 | 2010 | V | | | | | | | V | տուֆ | | V | | | 2 | | 2 |
| 1 | Բնակելի | բնակելի տուն | 2 | 2 | | 41.2 | 2.95 | 121.5 | 2019 | V | | | | | | | V | տուֆ | | V | | | 2 | | 2 |

Առկա է ինքնակամ բացված 2 դուռ, 4 պատուհան, 2 միջհարկային ծածկի բացվածք:

| Շինության ընդհանուր մակերեսը (քմ) | Այդ թվում | |
|---|---|---|
| | Օրինական | Ինքնակամ |
| 27 | 28 | 29 |
| 202.6 | 157.1 | 45.5 |

Կատարող ______ (ստորագրություն) — Տիգրան Լևոնյան (անուն, ազգանուն) — 01.12.2020թ. (ամիս, ամսաթիվ)

Որակավորման վկայականի 0247 (համարը) — 20.12.2012թ. (տրման ամիս, ամսաթիվ)

Իրավաբանական անձի 264.970056 (պետական գրանցման համարը) — <<Տիգրան Լևոնյան>> ԱՁ (անվանումը) — ______ (ստորագրություն)

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի
2011թ. հոկտեմբերի 20-ի N 284-Ն հրամանի

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

ՎԱԶԳԵՆ ԽՈՒԴԱՆՅԱՆ
Անուն, ազգանուն

| Կոտայք | Արզական | Սևանի փողոց թիվ 4/4/1 | Մասշտաբ_1:200_______ |
|---|---|---|---|
| Մարզ | Համայնք | Հասցե | |

1. Բնակելի տուն և ավտոտնակ




Նկուղ
D=0.32-0.47
H=3.0, 3.1
h=1.4, 2.6




1-ին հարկ
D=0.13-0.47
d=0.26-0.34
H=3.0, 3.1
h=2.85, 2.95




2-րդ հարկ
D=0.11-0.43
d=0.09-0.2
H=3.1
h=2.95

ՀՀ ԵՐԵՎԱՆ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ · РЕСПУБЛИКА АРМЕНИЯ ЕРЕВАН ЧАСТНЫЙ ПРЕДПРИНИМАТЕЛЬ · REPUBLIC OF ARMENIA YEREVAN PRIVATE ENTREPRENEUR
ՏԻԳՐԱՆ ԼԵՎՈՆՅԱՆ
ТИГРАН ЛЕВОНЯН
TIGRAN LEVONYAN
83336834

<<ՏԻԳՐԱՆ ԼԵՎՈՆՅԱՆ>> ԱՁ

Կատարող ________ (ստորագրություն) | Տիգրան Լևոնյան (Անուն, ազգանուն) | 01.12.2020թ. Ամիս, ամսաթիվ

Որակավորման վկայականի համարը 0247 տրման ամիս, ամսաթիվը 20.12.2012թ.

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

ՎԱԶԳԵՆ ԽՈՒԴԱՆՅԱՆ
Անուն, ազգանուն, (անվանում)

Հողհատկացման հիմքը վկ. թիվ 21062019-07-0095

Կոտայք — Մարզ
Աբովյան — Համայնք
Սևանի փողոց թիվ 4 /4 /1 — Հասցե

Մասշտաբ 1:200

04.2021թ




| ՀՈՂԱՄԱՍԻ | | Անկյունների (բեկման) կետեր | Կոորդինատները X | Կոորդինատները Y | Գծային չափերը (մետր) | Սահմանակից սեփականատիրոջ (օգտագործողի) անուն, ազգանունը (անվանումը) |
|---|---|---|---|---|---|---|
| Մակերեսը քմ (հա) | 0.008954 հա | | | | | |
| Ծածկագիրը | 07-002-0049-0681 | 1 | 4460441.68 | 8468048.84 | 7.10 | |
| Նպատակային նշանակությունը | Բնակավայրերի | 2 | 4460443.76 | 8468055.62 | 4.70 | |
| Գործառական նշանակությունը | Բնակելի կառուցապատման | 3 | 4460439.28 | 8468057.03 | 0.10 | |
| Հողամասը ծանրաբեռնված է | | 4 | 4460439.25 | 8468056.94 | 8.00 | |
| | | 5 | 4460431.61 | 8468059.33 | 7.00 | |
| | | 6 | 4460429.52 | 8468052.65 | 12.75 | |
| | | 1 | 4460441.68 | 8468048.84 | | |

| ՇԵՆՔ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Համարն՝ ըստ հողամասի հատակագծի | Գործառական նշանակությունը (անվանումը) | Անկյունների (բեկման) կետեր | Կոորդինատները X | Կոորդինատները Y | Գծային չափերը (մետր) |
| 1 | Բնակելի տուն և ավտոտնակ | 1 | 4460441.68 | 8468048.84 | 7.10 |
| | | 2 | 4460443.76 | 8468055.62 | 4.70 |
| | | 3 | 4460439.28 | 8468057.03 | 0.10 |
| | | 4 | 4460439.25 | 8468056.94 | 8.00 |
| | | 5 | 4460431.61 | 8468059.33 | 7.00 |
| | | 6 | 4460429.52 | 8468052.65 | 12.75 |
| | | 1 | 4460441.68 | 8468048.84 | |

Կատարող ____ (ստորագրություն) Տիգրան Լևոնյան (անուն, ազգանուն) 01.12.2020թ. ամիս, ամսաթիվը

Որակավորման վկայականի 0247 (համարը) 20.12.2012թ. (տրման ամիս, ամսաթիվը)

Իրավաբանական անձի 264.970056 (պետական գրանցման համարը) <<ՏԻԳՐԱՆ ԼԵՎՈՆՅԱՆ>> ԱՁ (անվանումը)

Կ.Տ. ____ (ստորագրություն)

ՏԻԳՐԱՆ ԼԵՎՈՆՅԱՆ TIGRAN LEVONYAN 83336834

Դիմող՝ ՀՐԱՅՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Տրամադրված տեղեկատվությունը՝ 05.06. 2020թ.
(տրման ամսաթիվը)

| Հ/Հ | Մարզ | Համայնք, քաղաք, գյուղ, վարչական շրջան | Ծածկագիր | Կադաստրային քարտեզ | | Շրջադարձային կետերի կոորդինատներ | | Տպագրված թերթեր | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Միավորի քանակը | Արժեքը (դրամ) | քանակը | Արժեքը (դրամ) | քանակը | Արժեքը (դրամ) |
| 1 | Կոտայք | ք.Աբովյան | 0048-0154 | 1 | 100 | | | | |
| 2 | Կոտայք | ք.Աբովյան | 0066-0115 | 1 | 100 | | | | |
| 3 | Կոտայք | ք.Աբովյան | 0067-0003,0017 | 2 | 200 | | | | |

Վճարման ենթակա գումարի չափը կրկնավճարով՝ 800 դրամ

Տեղեկատվությունը տրամադրվում է Կադաստրի Կոմիտեի Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի կողմից:

Տեղեկատվությունը տրամադրվել է www.e-cadastre.am կայք էջից

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե

# Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն   N 0247

## ՏԻԳՐԱՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության
գործունեության մասնագիտական որակավորման հանձնաժողովի
18 դեկտեմբերի 2012թ. եզրակացությամբ՝ արձանագրություն N 1
տրվել է

## ՔԱՐՏԵԶԱԳՐՈՂԻ, ԳԵՈԴԵԶԻՍՏԻ, ՉԱՓԱԳՐՈՂԻ (ՀԱՇՎԱՌՈՂԻ), ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԻ

*ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ*

ՀՀ կառավարությանն առընթեր
անշարժ գույքի կադաստրի
պետական կոմիտեի նախագահ

Ե. ԶԱԽԱՐՅԱՆ

<<20>> դեկտեմբերի 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ապրիլի 2021 թվականի N 442

## «ԾՈՎԻՆԱՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱԼԲԵՐՏԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 68-Ն որոշման, հիմք ընդունելով «Ծովինար Ստեփանյան Ալբերտի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2021 թվականի ապրիլի 13-ի N Ք-905).

1. «Ծովինար Ստեփանյան Ալբերտի» անհատ ձեռնարկատիրոջը տալ 2021 թվականի ընթացքում Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջանի թիվ 10/1 հասցեում գտնվող 44.1 քառակուսի մետր մակերեսով խանութում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 64 կցվում է):

2. «Ծովինար Ստեփանյան Ալբերտի» անհատ ձեռնարկատերը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201074 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 42 000 (քառասուներկու հազար) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Ծովինար Ստեփանյան Ալբերտի» անհատ ձեռնարկատիրոջը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. ապրիլի 15
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ՈԱԽԾ - 64

## ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ

Տրված՝ ***15 ապրիլի 2021թ.***

Վաճառքի կամ իրացման թույլատրված ապրանքի անվանումը՝
***Ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն:***

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
***«Ծովինար Ստեփանյան Ալբերտի» անհատ ձեռնարկատեր, ՀՀ Կոտայքի մարզ ք. Աբովյան 4 մկրշ. շ.10 բն. 16, ՀՎՀՀ՝ 43138996:***

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝ ***ՀՀ Կոտայքի մարզ ք. Աբովյան 4-րդ միկրոշրջանի թիվ 10/1, խանութ:***

Շինության տեսակը՝ ***հիմնական շինություն:***

Թույլտվության գործողության ժամկետը՝ ***01 հունվարի 2021թ.***-ից մինչև ***31 դեկտեմբերի 2021թ.***-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ապրիլի 2021 թվականի N 441

## «ՄԱՐԻՆԵ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 68-Ն որոշման, հիմք ընդունելով «Մարինե Փարսադանյան Գուրգենի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2021 թվականի ապրիլի 13-ի N Ք-910).

1. «Մարինե Փարսադանյան Գուրգենի» անհատ ձեռնարկատիրոջը տալ 2021 թվականի ընթացքում Աբովյան քաղաքի Սարալանջի փողոցի թիվ 16/2, 16/2/1 հասցեում (79.85 քառակուսի մետր) ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 63 կցվում է):

2. «Մարինե Փարսադանյան Գուրգենի» անհատ ձեռնարկատերը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201074 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 108 000 (հարյուր ութ հազար) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Մարինե Փարսադանյան Գուրգենի» անհատ ձեռնարկատիրոջը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. ապրիլի 15
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ՈԱԽԾ - 63

## ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Տրված՝ ***15 ապրիլի 2021թ.***

Վաճառքի կամ իրացման թույլատրված ապրանքի անվանումը՝
***Ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք:***

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝ ***«Մարինե Փարսադանյան Գուրգենի» անհատ ձեռնարկատեր, ՀՀ Կոտայքի մարզ ք. Աբովյան Սարալանջի փողոց 15 շ., 28 բն. ՀՎՀՀ՝ 43115856:***

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝ ***ՀՀ Կոտայքի մարզ ք. Աբովյան Սարալանջի փողոց թիվ 16/2, 16/2/1 :***

Շինության տեսակը՝ ***հիմնական շինություն:***

Թույլտվության գործողության ժամկետը՝ ***01 հունվարի 2021թ.***-ից մինչև ***31 դեկտեմբերի 2021թ.***-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ապրիլի 2021 թվականի N 440

## «ԳԵՎՈՐԳ ՄԱՐՅԱՆՅԱՆ ԳԱՐԵԳԻՆԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 35-րդ հոդվածի, $169^{16}$-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 275-283-րդ, 219.1-րդ և 305-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ, 58-60-րդ հոդվածների, հիմք ընդունելով Ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Կոտայքի բաժնի քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը և Աբովյան համայնքի ղեկավարին առընթեր վարչական հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 15-ի արձանագրությունը.

1. Առանց թույլտվության ոգելից խմիչքների վաճառք իրականացնելու, ինչպես նաև առանց թույլտվության ժամը 24:00-ից հետո զվարճանքի ակումբ աշխատեցնելու համար «Գևորգ Մարյանյան Գարեգինի» Անհատ Ձեռնարկատիրոջ նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի $169^{16}$-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նշանակել վարչական տուգանք՝ 20 000 (քսան հազար) դրամի չափով, իսկ $169^{16}$-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով՝ 200 000 (երկու հարյուր հազար) դրամի չափով:

2. «Գևորգ Մարյանյան Գարեգինի» Անհատ Ձեռնարկատերը պարտավոր է սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 15-օրյա ժամկետում նշանակված տուգանքի գումարը մուծել Աբովյանի համայնքապետարանի 900105201272 հաշվեհամարին և վճարման անդորրագիրը ներկայացնել Աբովյան համայնքի ղեկավարին առընթեր վարչական հանձնաժողովին:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Աբովյան համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Գևորգ Մարյանյան Գարեգինի» Անհատ Ձեռնարկատիրոջը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021թ. ապրիլի 15
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ապրիլի 2021 թվականի N 439

## ՋԱՆԲԵՐՏ ՆԱԶԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 21-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի, 53-րդ, 58-60-րդ հոդվածների, հիմք ընդունելով վարչական վարույթի քննարկման մասին 2021 թվականի ապրիլի 15-ի արձանագրությունը, հաշվի առնելով աղբահանման վճարների հաշվառման ընթացքի վերաբերյալ էլեկտրոնային քարտը, որի համաձայն Աբովյան քաղաքի Չափիչի 4-րդ շենքի թիվ 36 բնակարանի բնակիչ Ջանբերտ Նազարյանի աղբահանության վճարի գծով պարտավորությունը 04.02.2021 թվականի դրությամբ կազմում է 22 452 դրամ (որից ապառք՝ 11 000 դրամ, տույժ՝ 11 452 դրամ)։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ջանբերտ Նազարյանը չի կատարել աղբահանության գծով իր պարտավորությունը՝

1. Ջանբերտ Նազարյանից hօգուտ Աբովյան համայնքի բյուջե գանձել 22 452 (քսաներկու հազար չորս հարյուր հիսուներկու) դրամ գումար՝ որպես աղբահանության վճար (վճարման հաշվեհամար՝ 900105201827)։
2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Աբովյան համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում։
3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում։
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ջանբերտ Նազարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. ապրիլի 15
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ապրիլի 2021 թվականի N 438

## ՄԱՐԻԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 21-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի, 53-րդ, 58-60-րդ հոդվածների, հիմք ընդունելով վարչական վարույթի քննարկման մասին 2021 թվականի ապրիլի 15-ի արձանագրությունը, հաշվի առնելով աղբահանման վճարների հաշվառման ընթացքի վերաբերյալ էլեկտրոնային քարտը, որի համաձայն Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջանի 4-րդ շենքի թիվ 18 բնակարանի բնակիչ Մարիամ Գևորգյանի աղբահանության վճարի գծով պարտավորությունը 01.03.2021 թվականի դրությամբ կազմում է 47 366 դրամ (որից ապառք՝ 28 610 դրամ, տույժ՝ 18 756 դրամ): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարիամ Գևորգյանը չի կատարել աղբահանության գծով իր պարտավորությունը՝

1. Մարիամ Գևորգյանից հօգուտ Աբովյան համայնքի բյուջե գանձել 47 366 (քառասունյոթ հազար երեք հարյուր վաթսունվեց) դրամ գումար՝ որպես աղբահանության վճար (վճարման հաշվեհամար՝ 900105201827):
2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Աբովյան համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարիամ Գևորգյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. ապրիլի 15
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ապրիլի 2021 թվականի N 437

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 4-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԻ ԹԻՎ 4/458 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի և իրավահարաբերության պահին գործող 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, 2006 թվականի մայիսի 26-ի N 1022-Ն և 2007 թվականի օգոստոսի 9-ի N 1036-Ն որոշումների, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 70-Ն և 2021 թվականի հունվարի 26-ի N 06-Ա որոշումների, հաշվի առնելով Կարլեն Խաչատրյանի դիմումը (մուտք՝ 2020 թվականի դեկտեմբերի 18-ի N Ք-2548) և համաձայնությունը.

1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2021 թվականի փետրվարի 2-ի N 02022021-07-0116 վկայական) 4-րդ միկրոշրջանի թիվ 4/458 հասցեում գտնվող ավտոտնակը՝ 27.4 քառակուսի մետր արտաքին մակերեսով, 24.75 քառակուսի մետր ներքին մակերեսով և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 27.4 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Կարլեն Խաչատրյանին:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 2 600 (երկու հազար վեց հարյուր) դրամ (տարածագնահատման 7-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.26).

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4 524 (չորս հազար հինգ հարյուր քսանչորս) դրամ:

4. Կարլեն Խաչատրյանը պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900105201777 հաշվեհամարին՝ 71 200 (յոթանասունմեկ հազար երկու հարյուր) դրամ՝ ավտոտնակի գինը.
2) համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին՝ 124 000 (հարյուր քսանչորս հազար) դրամ՝ հողամասի գինը.
3) համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին՝ 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման փաստաթղթերի կազմման համար ծառայության վճար, 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:
5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Կարլեն Խաչատրյանի կողմից:
6. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարլեն Խաչատրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021թ. ապրիլի 15
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ապրիլի 2021 թվականի   N 436

## «ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԻՇԱՅԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 68-Ն որոշման, հիմք ընդունելով «Նելլի Գրիգորյան Միշայի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2021 թվականի ապրիլի 12-ի N Ք-895).

1. «Նելլի Գրիգորյան Միշայի» անհատ ձեռնարկատիրոջը տալ 2021 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում Աբովյան քաղաքի Բարեկամության փողոցի 3-րդ շենքի թիվ 1/3 հասցեում գտնվող 67.34 քառակուսի մետր մակերեսով խանութում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 62 կցվում է):

2. «Նելլի Գրիգորյան Միշայի» անհատ ձեռնարկատերը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201074 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 13 500 (տասներեք հազար հինգ հարյուր) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Նելլի Գրիգորյան Միշայի» անհատ ձեռնարկատիրոջը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ   Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. ապրիլի 14
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

## ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ՈԱԽԾ - 62

## ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ

Տրված՝ *14 ապրիլի 2021թ.*

Վաճառքի կամ իրացման թույլատրված ապրանքի անվանումը՝
*Ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն:*

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
*«Նելլի Գրիգորյան Միշայի» անհատ ձեռնարկատեր ՀՀ ք. Երևան Գալշոյան փողոց շ. 14 բն. 48, ՀՎՀՀ՝ 25437898:*

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝ *ՀՀ Կոտայքի մարզ ք. Աբովյան Բարեկամության փողոց 3-րդ շենքի թիվ 1/3, խանութ:*

Շինության տեսակը՝ *հիմնական շինություն:*

Թույլտվության գործողության ժամկետը՝ *01 ապրիլի 2021թ.*-ից մինչև *01 հուլիսի 2021թ.*-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ու Մ

14 ապրիլի 2021 թվականի N 435

## «ԱՖ-ՄԱՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 02-ի N 88 որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 70-Ն որոշման և հաշվի առնելով «ԱՖ-ՄԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի դիմումը (մուտք՝ 2020 թվականի դեկտեմբերի 28-ի N S-450).

1. Թույլատրել փոփոխելու «ԱՖ-ՄԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2020 թվականի դեկտեմբերի 28-ի N 28122020-07-0021 վկայական) Աբովյան քաղաքի Երիտասարդական փողոցի թիվ 5/3 հասցեում գտնվող 266.02 քառակուսի մետր մակերեսով սպասարկման օբյեկտի գործառական նշանակությունը և առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի ու նախագծային փաստաթղթերի ներքին հարդարման աշխատանքներն ավարտելուց հետո այն օգտագործել որպես բնակելի տուն:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի գործառական նշանակությունը որպես բնակելի տուն փոփոխելուց հետո այն ընդգրկել Աբովյան համայնքի բնակելի ֆոնդում:

3. «ԱՖ-ՄԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 116 510 (հարյուր տասնվեց հազար հինգ հարյուր տասը) դրամ՝ որպես անշարժ գույքի գործառական նշանակության փոփոխության ծառայության վճար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԱՖ-ՄԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. ապրիլի 14
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ապրիլի 2021 թվականի N 434

## ԳԵՎՈՐԳ ՍԵԴՐԱԿՅԱՆԻՆ ԵՎ ԼԻԼԻԹ ԲԱԲԱՅԱՆԻՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Գևորգ Սեդրակյանի և Լիլիթ Բաբայանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի ապրիլի 09-ի N Ք-885), հաշվի առնելով Աբովյան համայնքի ղեկավարին կից Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 14-ի N 5 արձանագրությունը.

1. Թույլատրել Գևորգ Սեդրակյանին և Լիլիթ Բաբայանին գրավադրելու իրենց անչափահաս երեխայի՝ Բելլա Գևորգի Սեդրակյանի (ծնված՝ 18.07.2016թ.) անվամբ ձեռք բերվող Աբովյան քաղաքի Սևանի փողոցի 2/6 շենքի թիվ 40 հասցեում գտնվող անշարժ գույքը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. ապրիլի 14
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ապրիլի 2021 թվականի   N 433

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի պետական համալիր փորձաքննական հանձնաժողովի 2021 թվականի մարտի 15-ի եզրակացությունը, հաշվի առնելով «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության լիազորած անձ Արսեն Զաքարյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի ապրիլի 01-ի N S-186).

1. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը տալ մարզահամալիրի վարչական շենքի, տրիբունաների հիմնանորոգման և տարածքի բարեկարգման շինարարության թույլտվություն (շինարարության թույլտվությունը կցվում է):
2. Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Աբովյան համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. ապրիլի 14
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

**N 26** «14» ապրիլի 2021թ.

Տրված է կառուցապատող *«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն* ին

(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը.

*ՀՀ, ք. Երևան, Կենտրոն վ/շ., Խանջյան փ., 27 շ., ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Նաիրյան փողոց, թիվ 3 մարզահամալիր*

ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

*Մարզահամալիրի վարչական շենքի, տրիբունաների հիմնանորոգման և տարածքի բարեկարգման (բարձր ռիսկայնության, IV-րդ կատեգորիա)*

(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

շինարարական աշխատանքների կատարման, այդ թվում՝ (նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման և այլն) կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ոչ հիմնական կառույցների________ տեղադրման համար:

(Նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

1. Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝

1) մշակվել են *«ԷՅ ՎԻ ԷՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ* կողմից.

(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

2) ստացել է (են) *«15» 03 2021 թ. N 28* փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները) *պետական համալիր*

(նշել փորձաքննության տեսակը)

*ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2021 թվականի մարտի 15-ի N 13-Ա հրամանով ստեղծված պետական համալիր փորձաքննական հանձնաժողովի* կողմից

(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)

կամ

նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝________

(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների *ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ* հետ:

(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել *24 ամսվա* ընթացքում՝

(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

Ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝

[] ավարտական ակտի տրամադրումից________ ամսվա ընթացքում

[] ավարտական ակտի տրամադրման օրը:

Ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է *14* էջից, կարված և դրոշմակնքված է *ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ* կողմից:

(իրավասու մարմնի անվանումը)

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են (լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում) ________________________ կողմից
(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի ________________________ և այլ
(նշել իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ մարմինների ________________________ հետ:
(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.

3) *(լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում)* սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը ________________________ :
(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6. *(լրացվում է N 1 հավելվածի 116-րդ կետով սահմանված դեպքերում)* Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա ________________ համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների) ________________________ քանդման՝
(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին) ________________________ տրված սույն
(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)

թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:

Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ ***շինհրապարակում ապահովել ժամանակավոր ցանկապատի և տեղեկատվական վահանակի առկայությունը*** ________________________ :
(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ, համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի, տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կ. Տ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ապրիլի 2021 թվականի N 432

## ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ ԹԻՎ 11 ՇԵՆՔԻ 11/5 ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲԱԺԱՆՎԱԾ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 42-րդ, 48-րդ և 49-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 70-Ն որոշման և հաշվի առնելով Վարդան Թուրվանդյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի մարտի 19-ի N Ք-727).

1. Վարդան Թուրվանդյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2020 թվականի օգոստոսի 10-ի N 10082020-07-0046 վկայական) Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտայի թիվ 11 շենքի 11/5 հասցեում գտնվող բնակարանի բաժանված մասերին՝ «ՏԻԳՐԱՆ ԼԵՎՈՆՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից 2021 թվականի փետրվարի 25-ին տրված գույքի բաժանման սխեմայի համաձայն՝ տրամադրել հասցեներ՝ առանձնացվող մաս 1 (40.8 քառակուսի մետր մակերեսով)՝ քաղաք Աբովյան, Հանրապետության պողոտա, 11 շենք, 11/1 բնակարան, առանձնացվող մաս 2 (28.3 քառակուսի մետր մակերեսով)՝ քաղաք Աբովյան, Հանրապետության պողոտա, 11 շենք, 11/2 բնակարան, առանձնացվող մաս 3 (23.9 քառակուսի մետր մակերեսով)՝ քաղաք Աբովյան, Հանրապետության պողոտա, 11 շենք, 11/3 բնակարան, առանձնացվող մաս 4 (42.8 քառակուսի մետր մակերեսով)՝ քաղաք Աբովյան, Հանրապետության պողոտա, 11 շենք, 11/4 բնակարան, առանձնացվող մաս 5 (27.4 քառակուսի մետր մակերեսով)՝ քաղաք Աբովյան, Հանրապետության պողոտա, 11 շենք, 11/5 բնակարան, մնացորդային մասին (27.5 քառակուսի մետր մակերեսով)՝ քաղաք Աբովյան, Հանրապետության պողոտա, 11 շենք, 11/6 բնակարան:

2. Վարդան Թուրվանդյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 30 000 (երեսուն հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարդան Թուրվանդյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. ապրիլի 13
ք. Աբովյան

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի
2011թ. հոկտեմբերի 20-ի N 284-Ն հրամանի

# ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՍԽԵՄԱ

ՎԱՐԴԱՆ ԹՈՒՐՎԱՆԴՅԱՆ
Անուն, ազգանուն

| Կոտայք | Աբովյան | Հանրապետության պողոտա 11 շ. հ. 11/5 | Մասշտաբ_1:200 |
|---|---|---|---|
| Մարզ | Համայնք | Հասցե | |




Կատարող ____________ Տիգրան Լևոնյան 25.02.2021թ.
(ստորագրություն) (Անուն, ազգանուն) Ամիս, ամսաթիվ

<<ՏԻԳՐԱՆ ԼԵՎՈՆՅԱՆ>> ԱՁ

Որակավորման վկայականի համարը 0247 տրման ամիս, ամսաթիվը 20.12.2012թ.

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզ ք. Աբովյան հանրապետության պողոտա 11 շենք թիվ 11/5 հասցեի թիվ 10072020-07-0094 վկայականով ամրագրված 4-րդ հարկի 4.0քմ միջանցքի և 46.1 քմ մուտքի նախասրահի և աստիճանահարթակի ներքին չափագրություն չի կատարվել: Շինության մակերեսի տարբերությունը առաջացել է ներքին փոփոխությունների արդյունքում:

| | | | | |
|---|---|---|---|---|
| Կատարող | | Տ.Լևոնյան | | 25.02.2021թ. |
| (Ստորագրություն) | | (Անուն, Ազգանուն) | | (Ամիս, ամսաթիվ) |
| Որակավորման վկայականի | | N 0247 | | 20.12.2012թ. |
| | | (Համարը) | | /Տրման ամիս, ամսաթիվ/ |
| Իրավաբանական անձի | 264.970056 | | "Տիգրան Լևոնյան" ԱՁ | ԱՁ |
| | (Պետական գրանցման համարը) | | (Անվանումը) | (Ստորագրություն) |

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե

# Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն   N 0247

## ՏԻԳՐԱՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության
գործունեության մասնագիտական որակավորման հանձնաժողովի
18 դեկտեմբերի 2012թ. եզրակացությամբ՝ արձանագրություն N 1
տրվել է

## ՔԱՐՏԵԶԱԳՐՈՂԻ, ԳԵՈԴԵԶԻՍՏԻ, ՉԱՓԱԳՐՈՂԻ (ՀԱՇՎԱՌՈՂԻ), ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԻ

*ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ*

ՀՀ կառավարությանն առընթեր
անշարժ գույքի կադաստրի
պետական կոմիտեի նախագահ

Ե. ԶԱԽԱՐՅԱՆ

<<20>> դեկտեմբերի 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ապրիլի 2021 թվականի N 431

## ԱՆԴՐԱՆԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով Անդրանիկ Թադևոսյանի հայտը (մուտք՝ 2021 թվականի մարտի 30-ի N Ք-797).

1. Անդրանիկ Թադևոսյանին տալ բնակելի տան, ավտոտնակի և պարսպի կառուցման նախագծման թույլտվություն (նախագծման թույլտվությունը կցվում է):

2. Անդրանիկ Թադևոսյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անդրանիկ Թադևոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. ապրիլի 12
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

*N 39 «12» ապրիլի 2021թ.*

Օբյեկտ *բնակելի տան, ավտոտնակի և պարսպի կառուցում*

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, վերանորոգում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

*«Աշխատանքային նախագիծ» (միջին ռիսկայնության, II-րդ կատեգորիա)* նախագծային փաստաթղթերի մշակման համար

(հակիրճ բնորոշումը, հզորությունը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը *ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, 7-րդ միկրոշրջան, 3-րդ թաղամաս, 14/6 հողամաս, ծածկագիր՝ 07-002-0031-0017*

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող *Անդրանիկ Թաղևոսյան (ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, 7-րդ մ/շ., 3-րդ թղմ., 14 տուն., հեռ. 37498134424)*

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը *Կառուցապատողի հայտը, անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման N 20032019-07-0007 վկայական՝ տրված 20.03.2019թ., էսքիզային նախագիծը:*

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթեր)

Առաջադրանքի գործողության ժամկետը *մեկ տարի:*

(ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N1 հավելվածի 31-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1.Հողամասը գտնվում է *նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման*

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2.(*) Հողամասի չափերը *0.02944 հա*

(հողամասի սահմանները կոորդինատային նշահարմամբ, մակերեսը, (հա))

3. Հողամասի առկա վիճակը *անբարեկարգ*

(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլ)

4.(*) Տրանսպորտային պայմանները *ներքաղաքային նշանակության ճանապարհ:*

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5.(*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ *Նախագծվող և կից տարածքներով անցնող ինժեներական գծեր և հաղորդակցուղիներ:*

(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ներակառույցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6.(*) Կից հողամասեր *Հարևանությամբ գտնվող բնակելի տներ, հողամասեր և տարածքներ*

(կից հողօգտագործողների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7.Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) ---

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8.(*) Հատակագծային սահմանափակումներ *Հաշվի առնել կից տարածքներում առկա և նախատեսվող կառուցապատումը*

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ներակառույցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9.Ճարտարապետահատակագծային պահանջներ *մշակել նախագիծ՝ Աբովյան քաղաքի 7-րդ միկրոշրջանի 3-րդ թաղամասի թիվ 14/6 հասցեում գտնվող հողամասում՝ բնակելի տան, ավտոտնակի և պարսպի կառուցում՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականով տրված հողամասի սահմաններում:*

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

| | |
|---|---|
| 9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) | *ըստ նորմերի* |
| 9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) | *ըստ նորմերի* |
| 9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) | *9.5 մ* |

(սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն.Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն))

| | |
|---|---|
| 9.4. կառուցապատման խտության գործակիցը<br>(կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) | *համաձայն նորմերի* |
| 9.5. կառուցապատման տոկոսը<br>(կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%) | *մինչև 40 %* |
| 9.6. կանաչապատման տոկոսը<br>(կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%) | *60 % և ավելի* |

9.7. այլ պահանջներ

- *Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները*
- *նախագծով նախատեսել բնակելի տան, ավտոտնակի և պարսպի կառուցում*

10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը ---

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները ---

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ — *Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ*

| | |
|---|---|
| 12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում | *Կցվում է*<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.2. (*) էլեկտրամատակարարում | *Կցվում է*<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.3 . (*) գազամատակարարում | *Կցվում է*<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը | *Կցվում է*<br>(համաձայն ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված էլեկտրային տվյալների) |
| 12.5. թույլ հոսանքներ | |
| 12.6. աղբահանություն | |

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում — *Կազմակերպել տարածքի ջրահեռացում:*

(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումներ)

14. Բարեկարգում — *Ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել*

(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջներ, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, զովացում և այլն)

15. Շինարարական նյութեր — *Երկաթբետոնե տարրեր, քարե շար, ապակի, մետաղական տարրեր:*

(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ծածկածների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ ---

(արտակարգ իրավիճակներում մարդկանց օբյեկտների պաշտպանության միջոցառումներ)

17. Հակահրդեհային պահանջներ — *Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները*

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումներ)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ — *ապահովել հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժը*

19. Շրջակա միջավայրի պահպանում — *ապահովել շրջակա միջավայրի պահպանման համապատասխան միջոցառումները*

(շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության բացառման միջոցառումներ)

20. Շինարարության կազմակերպում ---

(առաջարկություններ շինարարության հետ կապված անխուսափելի ազդեցության բացառման, քաղաքային տրանսպորտի և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը — *մեկ տարի ճարտարապետական մաս և կոնստրուկտիվ մաս*

(Նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ — *համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ. «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման*

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի նախաձեռնությամբ իրավասու կառույցներ համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում — *Համաձայնեցում Արովյան համայնքի ղեկավարի հետ*

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ ---

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումներ

- *Համաձայնեցում Արովյան համայնքի ղեկավարի հետ:*
- *Մինչև նախագծային աշխատանքները սկսելը համաձայնություն ձեռք բերել [illegible] ինժեներական ենթակառուցվածքների սեփականատերերի (օգտագործողների) հետ*
- *Համաձայնեցում հարևան հողամասի սեփականատեր(երի) (օգտագործող(ների)) հետ*

(Նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում ---

27. Այլ պայմաններ

- *Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. հ.273-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ.128-Ն հրամանով հաստատված դրույթներին:*
- *Նախագիծը ներկայացնել համաձայնեցման երկու օրինակից:*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* — *ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ*

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ապրիլի 2021 թվականի N 430

## ՎԱՐԴԱՆ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով Վարդան Մինասյանի հայտը (մուտք՝ 2021 թվականի մարտի 19-ի N Ք-734).

1. Վարդան Մինասյանին տալ սպասարկման օբյեկտի կառուցման նախագծման թույլտվություն (նախագծման թույլտվությունը կցվում է):
2. Վարդան Մինասյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարդան Մինասյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. ապրիլի 12
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

# ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

*N 38 «12» ապրիլի 2021թ.*

Օբյեկտ *սպասարկման օբյեկտի կառուցում*

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, վերանորոգում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

*«Աշխատանքային նախագիծ» (միջինից բարձր, III-րդ կատեգորիա)* նախագծային փաստաթղթերի մշակման համար

(հակիրճ բնորոշումը, հզորությունը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը *ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Սարալանջի փողոց, 15/5/2, ծածկագիր՝ 07-002-0090-0137*

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող *Վարդան Մինասյան (ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Սարալանջի փ, 15 շ., 5/1/2., հեռ. 37495945050)*

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը. ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը *Կառուցապատողի հայտը, անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման N 14012021-07-0061 վկայական՝ տրված 14.01.2021թ., էսքիզային նախագիծը:*

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթեր)

Առաջադրանքի գործողության ժամկետը *մեկ ու կես տարի:*

(ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N1 հավելվածի 31-րդ կետին համապատասխան)

## ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1.Հողամասը գտնվում է *նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման*

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2.(*) Հողամասի չափերը *0.03517 հա*

(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը, (հա)

3. Հողամասի առկա վիճակը *պարիսպ՝ 3.1 քմ*

(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլ)

4.(*) Տրանսպորտային պայմանները *ներքաղաքային նշանակության ճանապարհ:*

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5.(*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ *Նախագծվող և կից տարածքներով անցնող ինժեներական գծեր և հաղորդակցուղիներ:*

(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ներակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6.(*) Կից հողամասեր *Հարևանությամբ գտնվող բնակելի շենքեր, խանութներ և տարածքներ*

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7.Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) ---------

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8.(*) Հատակագծային սահմանափակումներ *Հաշվի առնել կից տարածքներում առկա և նախատեսվող կառուցապատումը*

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ներակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9.Ճարտարապետահատակագծային պահանջներ *մշակել նախագիծ՝ Աբովյան քաղաքի Սարալանջի փողոց թիվ 15/5/2 հասցեում գտնվող հողամասում՝ սպասարկման օբյեկտի կառուցում՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականով տրված հողամասի սահմաններում:*

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից. առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) *ըստ նորմերի*

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) *ըստ նորմերի*

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) *8.5 մ*

(սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն.Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն))

9.4. կառուցապատման խտության գործակիցը *համաձայն նորմերի*

(կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

9.5. կառուցապատման տոկոսը *մինչև 60 %*

(կառուցապատվող (անշրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)

9.6. կանաչապատման տոկոսը *40 % և ավելի*

(կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)

9.7. այլ պահանջ-ներ

- *Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները*
- *նախագծով նախատեսել սպասարկման օբյետկի կառուցում*

| | |
|---|---|
| 10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը | --------- |
| 11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները | ------- |
| 12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ | *Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ* |
| 12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում | *Կցվում է*<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.2. (*) էլեկտրամատակարարում | *Կցվում է*<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.3 . (*) գազամատակարարում | *Կցվում է*<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը | *Կցվում է*<br>(համաձայն ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների) |
| 12.5. բույլ հոսանքներ | |
| 12.6. աղբահանություն | |
| 13. Տարածքի ինժեներական նախապատրաստում | *Կազմակերպել տարածքի ջրահեռացում:*<br>(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները) |
| 14. Բարեկարգում | *Ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել*<br>(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջներ, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, զովացն և այլն) |
| 15. Շինարարական նյութեր | *Երկաթբետոնե տարրեր, քարե շար, ապակի, մետաղական տարրեր:*<br>(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ) |
| 16. Պաշտպանական կառույցներ | ———<br>(արտակարգ իրավիճակներում մարդկանց օբյեկտների պաշտպանության միջոցառումները) |
| 17. Հակահրդեհային պահանջներ | *Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները*<br>(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները) |
| 18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ | *ապահովել հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժը* |
| 19. Շրջակա միջավայրի պահպանում | *ապահովել շրջակա միջավայրի պահպանման համապատասխան միջոցառումները*<br>(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները) |
| 20. Շինարարության կազմակերպում | ----------<br>(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ) |
| 21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը | *մեկ ու կես տարի ճարտարապետական մաս և կոնստրուկտիվ մաս*<br>(Նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը) |

Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ   Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը

| | |
|---|---|
| 22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ | *համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ. «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման*<br>(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ նշում կատարելով համապատասխան իրավական ակտին) |
| 23. Միջանկյալ համաձայնեցում | *Համաձայնեցում Արովյան համայնքի ղեկավարի հետ*<br>(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում) |
| 24. Հասարակական քննարկումներ | ———<br>(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով) |
| 25. Համաձայնեցումներ | • *Համաձայնեցում Արովյան համայնքի ղեկավարի հետ:*<br>• *Մինչև նախագծային աշխատանքները սկսելը համաձայնություն ձեռք բերել տվյալ ինժեներական ենթակառուցվածքների սեփականատերերի (օգտագործողների) հետ*<br>• *Համաձայնեցում հարևան հողամասի սեփականատեր(երի) (օգտագործող(ների)) հետ*<br>(Նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ) |
| 26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում | -------------- |
| 27. Այլ պայմաններ | • *Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. հ.273-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ.128-Ն հրամանով հաստատված դրույթներին:*<br>• *Նախագիծը ներկայացնել համաձայնեցման երկու օրինակից:* |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ու Մ

12 ապրիլի 2021 թվականի N 429

## ԱԲՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԵՎ ԽԱՉԱՏՈՒՐ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ և 49-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 26-ի N 1022-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 70-Ն որոշման և հաշվի առնելով Աբրամ Խաչատրյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի մարտի 19-ի N Ք-726).

1. Աբրամ Խաչատրյանին և Խաչատուր Խաչատուրյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2021 թվականի ապրիլի 01-ի N 01042021-07-0114 վկայական) Աբովյան համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ քաղաք Աբովյան, 8-րդ միկրոշրջան, 1-ին թաղամաս, թիվ 129:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված անձինք պարտավոր են Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. ապրիլի 12
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ապրիլի 2021 թվականի N 428

## ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 2010 թվականի նոյեմբերի 9-ին կնքված պայմանագրի 9.1-րդ կետի, հաշվի առնելով Սամվել Բարսեղյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի ապրիլի 7-ի N Բ-864).

1. Լուծել 2010 թվականի նոյեմբերի 9-ին կնքված (գրանցված է Հայաստանի Հանրապետության Կոտայք նոտարական տարածքի նոտարի սեղանամատյանում N 5673) հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիրը:
2. Սույն որոշումից ծագող պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է Սամվել Բարսեղյանի կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սամվել Բարսեղյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. ապրիլի 12
ք. Աբովյան